

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՒՉԱՎԱՅԻ ՀԱՃԿԱՏԱՐԱ ՎԱՆՔՈՒՄ
(Ն. Ս. Օծության վարդապետական ձեռնադրության 35-ամյակի առթիվ)

Սուչավան հանդիսացել է ռումինահայության մի տեսակ Անի քաղաքը: Այն եղել է միաժամանակ ոչ միայն գաղութի հնագույն, այլև խոշորագույն կենտրոնը: Այդտեղ է, որ հայերը միջնադարում ստեղծել են ավելի քան 11 եկեղեցիներ ու վանքեր, որոնց կարևոր մեկ մասը դեռևս կանգուն վիճակում է: Դարձյալ Սուչավայի մոտ է գտնվում ոչ միայն Ռումինիայի, այլև Արևելյան Եվրոպայի հայ գաղթավայրերի հոչակավոր ուխտատեղին՝ Հաճկատարի ս. Աստվածածնի վանքը, որը կառուցվել է 1512 թ. հայազգի անասնավաճառ Դրըգան Տոնավագի կողմից: Երկար դարեր շարունակ հայրենազուրկ հայ բեկորների համար այն վեր է ածվել լույսի ու հույսի մի փարոսի: Շատ հարուստ է եղել Հաճկատարի վանքի խաղացած դերն ու նշանակությունը և ուշագրավ՝ նրա անցած ուղին: Այդ հարցերի լուսաբանմանն է նվիրվելու մեր գրած հոդվածաշարը, որը լույս կտեսնի հետագային:

Սակայն Հաճկատարի վանքի անունը է՛լ ավելի մեծացավ և ավելի մեծ ժողովրդականություն վայելեց հատկապես այն կարևոր իրադարձությամբ, որ մեզանից ուղիղ 35 տարիներ առաջ նրա դարավոր կամարների տակ իր վարդապետական քառասունքը անցկացրեց տ. Վազգեն վարդապետ Պալճյանը, Ռումինիայի հայոց հոգևոր թեմի ապագա հոգևոր առաջնորդը և ապագա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Այսպիսով Հաճկատարի հինավուրց վանքը կոչված էր նշանավորվելու անգամ նոր ժամանակներում, երբ դարերին դիմագրավելուց հետո Սուչավայի հայ գաղութը հյուծվել էր իսպառ...: Ռումինահայ թեմի հաջորդության հարցի անորոշ և անլուծելի



Հաճկատար, ուխտավորներով
(15 օգոստոս 1973 թ.)

համարված շրջանում՝ բերկրալի մի օր էր, երբ այդ պատմական վանքում ռումինահայ գաղութի ծոցից ծնված ու հայրենասի-

թությամբ աղեցուն շնորհալի երիտասարդներից ընտրելագույնը՝ Վազգեն վարդապետ Պալճյանը, իր սրբազան երդումն էր տալու, իրեն առհավետ նվիրելու համար հայ եկեղեցուն և հայ ժողովրդին:

Եվ իսկապես, ուղիղ 35 տարի առաջ երկրորդ աշխարհամարտի 1943 թվականն էր, երբ գոռում էին աշխարհավեր ռումբերը, Աթենքում, հունահայ թեմի հոգևոր առաջնորդ երջանկահիշատակ տ. Կարապետ արքեպիսկ. Մազլըմյանից վարդապետ ձեռնադրվելուց հետո, դեպի Հաճկատարի վանքի բարձունքն էր ելնում ամենայն նվիրումով նորընծա մի վարդապետ: Ժամանակի հայ մամուլը անդրադառնալով այդ կարևոր իրադարձությանը գրում էր. «Շաբաթ 9 հոկտեմբեր (1943), մայրաքաղաքս (իմա Բուխարեստ) հասավ նորընծա Վազգեն վարդապետ Պալճյան, որ Իգնատիոս քահ. Քիլիմյանի ընկերակցությամբ Աթենք գացած էր՝ տեղվույն առաջնորդ Կարապետ արք. Մազլըմյանե վարդապետ ձեռնադրվելու համար:

Ձեռնադրությունը տեղի ունեցած է Աթենքի Թորոնոտի թաղի հայ եկեղեցվույն մեջ՝ խարտավիլակությամբ Իգնատիոս քահ. Քիլիմյանի սեպտեմբեր 29-ին և 30-ին, մասնակցությամբ Աթենքի 6 քահանաներուն:

«Նորընծա Վազգեն վարդապետ Պալճյան, Իգնատիոս քահ. Քիլիմյանի հետ միասին, ներկա եղավ (Ռումանահայ) Թեմական խորհուրդի երկուշաբթի գիշերվա նիստին: Թեմական խորհուրդի ատենապետ պ. Արտաշես Գասարճյան հանուն թեմին ողջունելով նորընծան գոհունակությամբ մատնանշեց, որ առաջին անգամ է, որ թեմը իր իսկ ծոցեն բխած և երկրի լեզվին, օրենքներուն և պայմաններուն տեղյակ թեկնածու մը կունենա հոգևոր ղեկավարության, և մաղթեց անոր հաջողություն իր այս նվիրական ասպարեզին մեջ: Պալճյան վարդապետ զեկուցումը ըրավ իրենց ուղևորության և ձեռնադրության, տեղեկություններ հաղորդելով նաև հունահայ գաղութի մասին, և հուզված շեշտով մը կըրկնեց իր ուխտը անձնվիրությամբ ծառայելու հայ եկեղեցիին, որուն հոգևոր, բարոյական և ազգային առավելության սրտանց կհավատա, ծառայելու մանավանդ այս գաղութին որուն ծոցեն կբխի և որուն պիտի նվիրե հետ այսու իր բովանդակ կյանքն ու գործունեությունը»[1]:

Թերթը ապա, անդրադառնալով Վազգեն վարդապետ Պալճյանի Հաճկատարի վանքը մեկնելուն, գրել է. «Նորընծա Վազգեն վարդապետ Պալճյան թեմական խորհուրդի որոշմամբ, այս շաբթու Սուչովա կմեկնի, հոն լրացնելու համար կանոնական քառասունքը: Ինչպես հայտնի է Սուչովա առաջին հայ առաջնորդանիստ քաղաքը եղած է. և հոն է, որ նստած է 1401ին առաջին հայ առաջնորդը, Հովհաննես եպիսկոպոս, Ալեքսանդրու չել Բուն իշխանի օրով: Այնպես որ տեսակ մը խորհրդանշական բնույթ կստանա Պալճյան վարդապետի քառասունքը Սուչովայի մեջ, հայ թեմին մեջ հոգևոր և վարչական դեր ստանձնելե առաջ: Ինչպես հիշած ենք ուրիշ առթիվ պատմական երկու վանքեր ունինք Սուչովայի մեջ, Հաճկատարի և Ջամգայի վանքերը, բացի ս. Խաչ և ս. Սիմեոն եկեղեցիներեն»[2]:

Մամուլի հաջորդ լուրը ավետում էր Վազգեն վարդապետի ժամանման մասին. «Վազգեն վարդապետ Սուչովայի մեջ: Նորընծա Վազգեն վարդ. Պալճյան շաբաթ 16 հոկտեմբեր, մեկնեցավ Սուչովա իր կանոնական քառասունքը լրացնելու և մարզվելու հոգևոր պաշտոնակատարության մեջ՝ գործակցությամբ տեղվույն հոգևոր հովիվ Գնել քահ. Մանտալյանի, որ նախկին Արմաշական մըն է, հմուտ ծիսակատարության և եկեղեցական երաժշտության»[3]:

Մեծ հաջողությամբ սկսեցին իրար հաջորդել նորընծայի վարդապետական քառասունքի օրերը, և միաժամանակ իր ներկայությունը խանդավառություն կարողացավ ստեղծել Սուչավայի նոսրացած հայության համար ևս: Այդ մասին ժամանակի մամուլը արձագանքել էր հետևյալը. «Վազգեն վարդ.ի քառասունքը: Նորընծա Վազգեն վարդ. երկու շաբաթե ի վեր. իր քառասունքը կանցնե Հաճկատար վանքը, քաղաքեն կես ժամ հեռու: Ամեն երկու օր անգամ մը Սուչովայեն իրեն կայցելե Գնել քահ. Մանտալյան, օգնելու համար անոր ծիսակատարության և երգեցողության վարժությանց մեջ: Հայ նորընծա վարդապետի մը ներկայությունը մեզ մոտ՝ ոգևորության առիթ մը եղավ տեղվույս հայության համար ևս»[4]:

Ռումինիայի հայոց թեմական առաջնորդ Հուսիկ արքեպիսկ. Զոհրաբյանի մահվան հետևանքով թեմի հաջորդության հարցում ստեղծված անորոշությունից հետո բովանդակ ռումինահայությունը իր ցնծությունն էր ապրում ի տես նոր արժանավոր հոգևորականին: Բազմավաստակ հայագետ Հ. Ծ. Սիրունին այդ առթիվ հատուկ առաջ-

[1] «Արազ», Բուխարեստ, 17 հոկտ. 1943, № 1047:

[2] Նույն տեղում:

[3] Նույն, 24 հոկտ. 1943, № 1048:

[4] Նույն, 31 հոկտ. 1943 № 1049:

ՎԱՂԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԸ Ս. ՀԱՃԿԱՏԱՐԱ ՎԱՆՔՈՒՄ, ՍՈՒՉԱՎԱ ՔԱՂԱՔՈՒՄ. ԶԱԽԻՑ՝ Տ. ԳՆԵԼ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՆԴԱԼՅԱՆԸ, ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ Հ. Ժ. ՍԻՐՈՒՆԻՆ ԵՎ ՏԻԿԻՆ ՎԻԿՏՈՐԻԱ ՏՈՒՏՅԱՆԸ. ԱՋԻՑ՝ Տ. ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ, ՊԱՐՈՆ ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳԻՍՅԱՆԸ՝ ԱՆԴԱՄ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ, ԵՎ ՏԻԿԻՆԸ

նորդող հրատարակեց «Թեմին հաջորդությունը» խորագրով, ուր իր գոհունակությունը հայտնելով կատարվածի նկատմամբ գրում էր. «Թեմը ահա կունենա իր ծոցեն իսկ բխած կուսակրոն հայ հոգևորական մը, որ կոչված է ստանձնելու օր մը հոգևոր առաջնորդությունը թեմին: ...Մեզ շահագրգռողը հոս թեմին հաջորդության պարագան է, այսինքն պահպանությունը իրավունքի մը զոր հազիվ ձեռք ձգեցինք դարավոր պայքարե մը հետո:

«Ուրույն թեմ ունենալու նախանձախնդրությունը միշտ ալ գոյություն ունեցեր է այս գաղութին մեջ, թեև երկար անջրպետներ եղեր են հաճախ մեկ առաջնորդեն մյուսը Ռումանիո հայ եկեղեցիները, նախ 1365—1401, Լեհաստանի հայ թեմին ենթարկված են եղեր, մինչև որ 1401ին Ալեքսանդրու չել Բուն հայ առաջնորդ մը կվավերացնե իր մայրաքաղաքին Սուչավայի մեջ հանձին Հովհաննես եպիսկոպոսի...:

«Վերջին անցքերը ծանոթ են լրիվ: Գեորգ (Ե) կաթողիկոսը 1920ին Հուսիկ ծ. վ.ը Ռումանիա ուղարկեց իբր առաջնորդ, և ամբողջ 11 տարի ի զուր ճիգեր թափվեցան որպեսզի թեմը պաշտոնապես ճանչցվի, մինչև որ Նիքոլա Յոռկան եկավ իշխանության գլուխ ու 1931ին հայ թեմը ստեղծեց:

«Թվեցինք պատմական այս նոթերը ցույց տալու համար թե որքան ևվիրական պարտք մը կիյնա ամեն մեկուս ուսերուն՝ ապահովելու համար ռումանահայ թեմին հաջորդությունը, որուն մտահոգությունը չունեցանք, ավա՜ղ ամբողջ տասը տարի, երբ տարբեր էին մեր պայմանները»[5]:

Վերջապես իր վարդապետական քառասունքը լրացնելուց հետո 1943 թ. նոյեմբեր 26-ին, ուրբաթ օր, Հաճկատարի պատմական հոչակավոր ուխտատեղիում սակավաթիվ ուխտավորների ներկայությամբ իր անդրանիկ պատարագը մատուցեց Վազգեն վարդապետ Պալճյանը: Մամուլը կրկին անդրադարձավ այդ օրերին, սակայն բոլորից ավելի պերճախոսը նորընծայի կողմից պատարագից անմիջապես հետո գրի առնված այն սրտառուչ տողերն էին, թողնված Հաճկատարի վանքի տպավորությունների մատյանում: Այդ տողերը գրված են այնքան անկեղծությամբ և խոր զգացումով, որ կոչված են լավագույն կերպով մեզ հաղորդակից դարձնելու նորընծայի ներաշխարհին և նրա բացառիկ ևվիրումին: Ահա այդ անտիպ գրվածքը.

[5] Նույն, 17 հոկտ. 1943, № 1047:

«26 նոյեմբեր 1943, ի ս. Հաճկատար (Սուչավա).

«Ռումանահայ թեմական խորհուրդի որոշումով, Աթենքի մեջ Հունահայոց սրբազան առաջնորդ տեր Կարապետ արք. Մազլըմյանի կողմե սեպտ. 29—30-ին վարդապետ ձեռնադրվելե վերջ, ս. Հաճկատար եկա՝ կանոնական քառասունքը կատարելու համար: Նոյեմբեր 25-ին Պուքրեշեն Թեմական Խորհուրդի կողմե զիս առնելու եկան պր. Հ. Ծ. Սիրունի և պր. Արտաշես Սարգիսյան, իրենց տիկիններով, ինչպես նաև ընկերակցությամբ տիկ. Վ. Տուտյանի ու տեր Վարժապետյանի (Յաշեն): Ուրբաթ 26 նոյեմբեր 1943 իմ առաջին ս. պատարագս մատուցի ս. Հաճկատարի մեջ ի հիշատակ Մուտավահայ թեմի առաջին առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի, որ 1401-ին Հայաստանյաց եկեղեցվո Աթոռը հիմնեց ու երկրին իշխան Ալեքսանդրու չել Պունի կողմե պաշտոնապես ճանչցվեցավ: Ս. պատարագին մասնակցեցան Սուչավայի քահանա տեր Գնել Մանտալյան և Յաշի քահանա տեր Արսեն Վարժապետյան: Ս. պատարագեն հետո, երեկոյան, բոլոր հյուրերով միասին վերադարձանք դեպի Պուքրեշ, ուր 28 նոյեմբերին պիտի մատուցեմ իմ երկրորդ պատարագս:

Այսօրվընե, ինձի համար կսկսի նոր կյանք մը, կյանք մը որ ևվիրված պիտի ըլլա մեր եկեղեցվո ու մեր համայնքին: Աստված հետս ըլլա:

Վազգեն վրդ. Պալճյան»[6]:

26 նոյեմբեր 1943

Նույնպես արժի մեջբերել Հաճկատարի տպավորությունների մատյանից հիշյալ պատմական մեծ օրվան ականատես վկան եղող հայագիտության բազմավաստակ մըշակ Հ. Ծ. Սիրունու կողմից այնքան պատկերավոր ու զգացումով գրած հետագա տողերը.

«Պատմական այս վանքին մեջ ուր դարերը իրենց մռայլ խորհուրդը կծրարեն և ուր սերունդները եկան իրենց ցավը պատմելու հայ Աստվածամոր ու մեկնեցան սփոփված, ևվիրական այս բլուրին վրա՝ ուր մեր պապերը Աստուծո աղոթեցին, ու դարե-դար սերունդները իրարու փոխան-

[6] Ինչպես այս, այնպես էլ հետագա անտիպ տպավորությունները մեր խնդրանքին համաձայն սիրահոժար կերպով քաղել է Հաճկատարի տպավորությունների մատյաններից և մեզ տրամադրել Ռումինահայ Թեմական խորհրդի արխիվի վարիչ և հայ գրականությունը ռումիներենի քաջ թարգմանիչ Քրիստի Օտապաշյանը, որին էլ, օգտվելով առիթից, հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

ցեցին սրբազան ավանդությունները աստվածային մատնանքի մը պես, այսօր նորընծա հայ վարդապետ մը իր ուխտը կընե Աստուծո և մարդոց առջև, իր ուխտը կընե դարերուն առջև:

«Սակավ են հավատացյալները որ եկեր են վկա ըլլալու հանդիսավոր այս ուխտին. բայց հայուն Աստվածը վկա է վերեն ու վկա են ոգիները անթիվ պապերու: Եկեր են անոնք դարերուն խորեն: Անոնք Անիեն կուգան, կուգան գերեզմաններեն: Անոնք կուգան շշնջալու հեքիաթը զոր հայ ժողովուրդը գրկած կվազե դարերուն մեջեն, խորհուրդը մեծ գողգոթային ու մարտիրոսության որուն խաչը շալկած կքալե հայ ժողովուրդը խոնարհ ու վսեմ, աղկաղկ ու հզոր, ու մրմնջելու անուշ ու մռայլ մեղեդիի մը պես՝

—Ուխտդ ընդունական, վարդապե՞տ ու Աստված ընդունի թող պատարագդ՝ հանուն այս ժողովուրդին որ կզոհվի դարե-դար, ինչպես Աստուծո որդին»:

26 նոյեմբեր 1943. (Ստորագրել են նույն օրը բոլոր ներկաները):

Եվ այսպես երկար տարիներ շարունակ ռումինահայ մատաղ սերնդին ռաստիառակած, հրապարակագրական, հասարակական և գրական բեղմնավոր գործունեություն ծավալած Լևոն-Կարապետ Պալճյանը դառնալով Վազգեն վարդապետ, լիովին ուխտեց իր կյանքը նվիրաբերել իր եկեղեցուն և իր ժողովրդին:

1943 թ. նոյեմբերի 28-ի կիրակի օրն էր. Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցին քիչ անգամ այդքան մեծ բազմություն էր տեսել: Բոլորը եկել էին տեսնելու իրենց նորընծա վարդապետին, ունկընդրելու նրա մատուցած սուրբ պատարագը և քարոզը: Վազգեն վարդ. Պալճյանի կողմից Բուխարեստում մատուցված առաջին պատարագին արտասանած քարոզը վերածվեց գերագույն ուխտի մի խորհրդանիշ իր կյանքը առանց մնացորդի իր ժողովրդին նվիրելու ուղղությամբ: Նույն օրը թեմական պատգամավորական ժողովը, նախագահությամբ Արտաշես Գասարճյանի, միաձայնությամբ նրան ընտրեց թեմի առաջնորդական փոխանորդ: Իսկապես հիշատակության արժանի մի օր էր այդ ռումինահայ գաղութի նորագույն պատմության մեջ, երբ թափուր մնացած թեմի առաջնորդական Աթոռը ապահովում էր իր արժանավոր հաջորդին:

Ռումինահայության համար ուշագրավ մի օր էր նաև Բուխարեստի «Հայ մշակույթի տան» նորաստեղծ շենքում 1944 թ. հունվարի 27-ին տեղի ունեցած առաջնորդական տեղապահի աթոռակալության հանդիսությունը: Այդ օրը ճառերով հանդես եկան Վազգեն վարդապետ Պալճյանը, Ռումինահայ Թեմական խորհրդի ատենապետ Արտաշես Գասարճյանը, Ռումինահայ միության նախագահ, արվեստի քննադատ և արվեստի գործերի նշանավոր հավաքող Գրիգոր Զամպաքճյանը և վերջում՝ Ռումինիայի դավանության նախարար և հայտնի փիլիսոփա Յոն Պետրովիչը: Հանդիսությունը վերածվեց հայ և ռումինական բարեկամության վառ ցույցի: Այս առթիվ Վազգեն վարդապետը իր ճառում ի միջի այլոց ասաց. «Ավելի քան հինգ դարեր առաջ մեր նախահայրերը բարբարոսաբար հալածված հեթանոս ցեղերու կողմե, սուրբ խաչը ձեռքերնին ու Աստուծո խոսքը հոգիներուն մեջ կանգ. առին սույն ռումեն և քրիստոնյա հողին վրա, ուր իրենց կյանքին, իրենց հավատքին ու մշակույթին խարիսխը նետեցին...:

«Հետս կբերեմ նաև խոր հավատք դեպի մեր Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, որ ավելի քան տասնվեց դար Աստուծո խոսքը կքարոզե երկրի վրա իսկապես ներշնչված ձևով մը: Ավելին, հայ եկեղեցվո պարտեզին մեջ ծաղկած են անկորնչելի արժեքներ որ հայ ժողովուրդի հանճարին ոգեկան գանձերը կներկայացնեն: Նախ պետք է հիշել հայոց դասական գմայլելի լեզուն, որ Ե դարուն Աստվածաշունչի այն գլուխ գործոց թարգմանությունը տվավ մեզ, զոր Լաքրոզ գիտունը «Թագուհի թարգմանությանց» կկոչե: Քրիստոնեությունը ստեղծեց հայ եկեղեցիներու տիեզերական արժեք ներկայացնող ճարտարարվեստ մը, մանրանկարչական արվեստը և նաև միսթիկ գեղեցիկ բանաստեղծություն մը»:

Գրիգոր Զամպաքճյանը, իր խոսքը մասնավորելով նորընծա վարդապետին, ասաց.

«Երիտասարդ այս հոգևորականը որ թեմին գլուխը կու գա նոր շաղախ մըն է հայ և ռումեն տարրերու դարավոր հոգեկան կապին, որովհետև ծնած ու սնած աս հողին վրա ոչ ոք իրեն չափ պիտի կարենար մարմնացնել հայ և ռումեն ժողովուրդներու փոխադարձ զգացումները»: Ռումինական մամուլը և ռադիոն լայնորեն, անդրադարձան այդ կարևոր իրադարձությանը: Հ. Ճ. Սիրունին իր «Նիքոլա Յոռկայի ոգին» խորագրով նվիրած առաջնորդողում, անդրադառնալով մեծանուն հայագետի ու հայասերի գործունեությանը նշում էր, որ թեև ինչ-ինչ պատճառներով աթոռակալության հանդիսության ժամանակ չէր հիշվել նրա անունը, սակայն նրա ոգին շատ գոհ էր այդ օրը, «Որովհետև ոչ ոք իրմե ավելի իրավունք ուներ հրճվելու տեսնելով որ

կվերընձյուղի թեմը կրկին, շնորհիվ տարիե մը ի վեր թափված ճիգերու ավիշ ներարկելու համար թմրած օրգանիզմի մը, հրրճվելու՝ տեսնելով որ սքեմ առեր է հայ եկեղեցվո ծառայելու և ապահովելու համար թեմին հաջորդությունը, երիտասարդ հայ մտավորական մը, որուն ևս տրվեր էր աշակերտելու իրեն երբեմն համալսարանի դասեղաններուն վրա, խորհրդավոր զուգադիպություն՝ զոր իր հոգիին մեջ անշուշտ ինքն ալ կզգար թեմին վաղվան աթոռակալը հանդիսավոր այդ պահուն»[7]:

Գաղութի սիրված և հարգված երիտասարդի ընվիրաբերումը իր համայնքին ոգևորությամբ համակեց բովանդակ ռումինահայ գաղութին՝ մասնավորապես երիտասարդությանը և պատանեկությանը վերազարթնումի մի շրջան պարգևելով: Այդ օրերի իբրև ականատես վկա դժվար չէր նկատելը, որ նորընծա վարդապետի ցուցաբերած բացառիկ ընվիրումը իր ժողովրդին մեծ խանդավառությամբ համակել էր նաև նրանց սրտերը, որոնք մինչ այդ հեռու էին պահում իրենց ազգային-հասարակական աշխատանքներից, և սկիզբ առնող գործունեության ալիքը այս վերջիններին ևս մոտեցրեց համայնքի աշխատանքներին, և նրանք ևս սկսեցին իրենց լուման մուծել հայ կյանքի բոլոր ոլորտներում և հատկապես ազգապահպանման գործում: Մի խոսքով գաղութից ծնված, գաղութին հոգեհարազատ Վազգեն վարդապետ Պալճյանի անձն ու գործը ներշնչման աղբյուր հանդիսացան եկեղեցական, մշակութային և հասարակական կյանքի ծաղկման համար և խոր հետքեր թողեցին ռումինահայ գաղութի նորագույն շրջանի պատմության մեջ:

Նորընծա հայ հոգևորականը հետագա տարիներին ևս չմոռացավ Հաճկատարը: Ս. Աստվածածնի Վերափոխման տոնն էր կրկին, դարեր շարունակ հայ և օտար բազմահազար ուխտավորներ հեռավոր վայրերից փութացել էին Հաճկատար: Ռումինահայ թեմի առաջնորդական փոխանորդ Վազգեն վարդապետ Պալճյանի նախագահությամբ և «Հայաստանյան ճակատ» առաջադիմական կազմակերպության «Կոմիտաս» երգչախմբի մասնակցությամբ 1947 թ. օգոստոսին ուխտագնացություն կազմակերպվեց Արևելյան Եվրոպայի հայոց այս միակ վանքը: Ներկաների մեջ էր մեր անմոռանալի Տիրամայրը՝ տիկ. Սիրանուշ Պալճյանը, Բուխարեստից եկած մի շարք հայ ընտանիքներ, թեմական խորհրդի անդամներ, այժմ հանգուցյալ իմ մայրը՝ եկեղեցասեր ու հայրենասեր Ատրինե Գոլանճյանը, և տողերիս գրողը՝ իբրև «Հայաստանյան ճակատ» երիտասարդական կոմիտեի քարտուղար և «Հայ մշակույթի տան» վարիչ: Բուխարեստի «Հայաստանյան ճակատ» թերթի երկու համարներում ընդարձակորեն նկարագրելով այս այցը, ի միջի այլոց գրել էինք նաև հետևյալը. «Նույն գիշերը (իմա օգոստոսի 16-ին 1947 թ.) ս. Խաչ եկեղեցվո մեջ նախագահությամբ տ. Վազգեն վարդապետի նախատոնակ և հսկում տեղի ունեցավ ս. Աստվածածնա տոնին առթիվ: Բացի այցելուներից ներկա էին նաև Սուչավայի փոքրաթիվ գաղթականությունը:

«Կիրակի առավոտ կանուխ ս. Խաչ եկեղեցվո մեջ կատարված առավոտյան ժամերգութենե վերջ հավատացյալներու մեծ բազմությամբ թափոր կազմվելով, երգեցողությամբ ուխտավորներու խումբը Սուչավայի փողոցներեն սկսավ ուղղվիլ դեպի ս. Հաճկատար վանքը: Շատ հուզիչ էր տեսարանը, ճամբուն վրա գտնվող ռումեն եկեղեցիները կհնչեցնեին իրենց կոչնակները, իսկ քահանաները իրենց ժողովրդով կմիանային թափորին:

Օրվան պատարագիչն էր տ. Վազգեն վարդապետ, կսպասարկեր տ. Գ. քահ. Մանտալյան, իսկ պատարագի երգեցողությունը կատարվեցավ Հ. Ճ.ի «Կոմիտաս» երգչախումբի կողմե, որ մեծ տպավորություն ըրավ ներկաներուն վրա: Ապա տ. Վազգեն վրդ. իր ամենագեղեցիկ քարոզներեն մին խոսեցավ ռումեն լեզվով: Գեր. հայրը մասնավորապես ծանրացավ Դրըգան Տոնավագի տեսիլքին, վանքի շինության և մասնավորաբար ռումեն ժողովուրդի ցույց տված եղբայրական զգացումներուն հանդեպ: Նույնպես շեշտեց հայ ժողովուրդի դարավոր տառապանքները, արտագաղթը և այսօրվան ուրախառիթ վերադարձը դեպի վերածաղկող հայրենիք: Մաղթանքներ ըրավ ռումեն ժողովուրդի ու Սովետ. Հայաստանի բարգավաճման համար: Ապա բոլոր ուխտավորները նույն թափորով և երգեցողությամբ վերադարձան քաղաք»[8]: Արժի այդ առթիվ հիշատակել, բացի հայերից, նաև ռումինացիների և այլազգիների ներկայությունը: Միշտ այն վայրը որտեղից բլրի վրա առաջին անգամ ուղևորի աչքին երևվում է Հաճկատարի վանքը, դեռևս հին ժամանակներից գոյություն էր ունեցել մի

[7] «Արազ», Բուխարեստ, 1944, 6 փետրվարի, № 1063:

[8] Ս. Գոլանճյան, Հ. Ճ.ի «Կոմիտաս» երգչախումբի այցելությունը Սուչավա, «Հայաստանյան ճակատ», 24 օգոստոս 1947, № 57(133) և 31 օգոստոս, 1947, № 58(134):

խաչքար, որը, քանդված լինելով, այդ տարին գերմանացի մի ընտանիք է, որ վերակառուցել էր այն, և որի օծման արարողությունը կատարեց ճանապարհին շրջապատված հոգևորականությամբ ու ժողովրդով հոգեշնորհ Վազգեն վարդապետ Պալճյանը:

Հաճկատարի ուխտավորների հիշատակագրությունների մատյանում այս առթիվ հետևյալ տողերն են թողել Տիրամայր Պալճյանն ու Վազգեն վարդապետ Պալճյանը.

«13 օգոստոս 1947

Եկա Հաճկատար ս. Աստվածածնա տոնին որպես ուխտավոր: Բարձրյալն Աստված մեր աղոթքը և խնդրանքը ընդունելի ընե և մաղթենք որ հառաջիկա տարին խաղաղությամբ և առողջությամբ արժանի ըլլանք դարձյալ այցելելու և փառաբանելու ս. Աստվածածնա տոնը ս. Հաճկատար վանքին մեջ:

Օրհնյալ ըլլա հիմնադիր Աստվածատուր Տոնավագ:

Տիրամայր Պալճյան»:

«13 օգոստոս 1947

Մոտ չորս տարի վերջ, ահա կրկին Հաճկատար կգտնվիմ ս. Աստվածածնա առթիվ ս. պատարագ մատուցանելու համար: Մորս հետ եկա քանի մը օր վանքին մեջ բնակելու ուխտով: Եկեղեցին և շրջաբակը գտա ավելի անխնամ վիճակի մեջ քան 1943-ին: Անշուշտ անցնող պատերազմի հետքերը հոս ալ նկատելի են: Աղոթենք Աստուծո, որ մեզ ուժ և կարողություն տա, որպեսզի ավելի լրջորեն կարենանք այս սրբավայրին մասին խորհիլ և միջոցներ ձեռք առնել զայն ավելի պայծառ վիճակի մը հասցնելու համար:

Առաջնորդական տեղապահ՝

Վազգեն վարդապետ»:

Ավելորդ չի լինի այստեղ նշել նաև, որ հանձնարարությամբ հոգեշնորհ տ. Վազգեն վարդապետի և թեմականի անդամ, այժմ հանգուցյալ Գ. Բարսեղյանի, վերոհիշյալ օրերին պրպտումներ կատարեցինք Սուչավայի հայոց թաղականության արխիվում, ուր հնարավոր եղավ գտնել 1649 թ. Սուչավայում Հովհաննես քահանայի կողմից ս. Սիմեոն եկեղեցում գրված ձեռագիր մի Ավետարան և ուր Մոլդովայի հայոց թեմի իբրև առաջնորդ է հիշվում Մինաս վարդապետը: Հնարավոր եղավ գտնել նաև թերի ձեռագիր մի Հայսմավուրք, Սուչավայի հայոց անցյալին վերաբերող բազմաթիվ արխիվային նյութեր (հայերեն, ռումիներեն և գերմաներեն) և սրբապատկերներ, որոնք տ. Վազգեն վարդապետի գլխավորությամբ ու Գնել քահ. Մանտալյանի աջակցությամբ հնարավոր եղավ փոխադրել այն ժամանակվա Բուխարեստի «Հայ մշակույթի տան» մատենադարանը: 1649 թ. Սուչավայում գրված Ավետարանի վերջում այս առթիվ թողել ենք հետագա հիշատակագրությունը.

«Գրեթե կորսված նկատված այս ձեռագիր Ավետարանը կիրակի 17 օգոստոս 1947-ին, Հ. Ճ.ի «Կոմիտաս» երգչախումբին հետ Սուչավա կատարված ուխտագնացության առիթով ս. Հաճկատարի հրաշափառ տոնին Ռումանիո թեմիս առաջնորդական փոխանորդ տ. Վազգեն վարդապետի հետ ու Սուչավայի հոգևոր հովիվ տ. Գ. քհ. Մանտալյանի աջակցությամբ ուրիշ ձեռագիրներու սրբապատկերներու հետ կարելի եղավ գտնել սույն Ավետարանը և փոխադրել Պուքրեշ գետեղվելու համար «Հայ մշակույթի տան» Ձեռագրատունը, իբր այս հաստատության 123-րդ ձեռագիրը:

31 օգոստոս 1947. Սուրեն Ե. Գոլանճյան մատենադարանապետ Պուքրեշի «Հայ մշակույթի տան»[9]:

Նախքան իմ հայրենադարձվելը, 1948 թ. հունիսին, Ռումինիայի երբեմնի հայաշատ կենտրոնները ուսումնասիրելու նպատակով իմ կատարած ճանապարհորդության ընթացքում կրկին բախտը ունեցա այցելել Սուչավա ու իր հայկական հուշարձանները: Տ. Գնել քահ. Մանտալյանի կողմից ինձ վստահվեց Հաճկատարի վանքի հսկա բանալին, և հետիոտն ճեղքելով դալարագեղ դաշտերն ու ձորերը կրկին դիտեցի այն: Հայերի թիվը նոսրացած լինելով ռումինացի գյուղացիներ է, որ եկել էին ուխտի և ծունկ առ ծունկ բարձրանում էին հայկական վանքի բլուրն ի վեր, որը հայտնի է «Ողորմության բլուր» անունով: Սրտի խոր-

[9] 1649 թ. Սուչավայում գրված վերոհիշյալ ձեռագիրը այժմ ցուցադրված է ռումինահայ թեմի առաջնորդարանին առընթեր ստեղծված թանգարանում: Հ. Գաֆթանյանը, Թեոդիկը և այլ բանասերներ գրել են, որ 1649 թ. Սուչավայի Մետրոպոլիտական տպարանից լույս է տեսել հայերեն մի Ավետարան: Անշուշտ վերոհիշյալ բանասերները հենվել են Խ. Լուքաչյանի 1859 թ. Տրանսիլվանիայի հայերի պատմության նվիրած լատիներեն աշխատության վրա, ուր հիշվում է նաև ժամանակի Մոլդովայի հայոց թեմի առաջնորդ Մինաս վարդապետի անունը: Նման տպագիր գործ ցարդ չի հայտնաբերված: Մենք կարծում ենք, որ այդ տեղեկությունը մի արձագանք է Սուչավայում նույն թվականին գրված վերոհիշյալ ձեռագիր Ավետարանի: Մեր կարծիքը ընդունելի է համարվել «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ 1512—1800» գրքի կազմողների կողմից (Երևան, 1963, էջ 15):

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ. ՁԱԽԻՑ՝ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆՑ
ՄԻՆԻՍՏՐ, ՊՐՈՖ. ԻՈՆ ՊԵՏՐՈՎԻՉ (1944 թ. ՀՈՒՆՎԱՐ, ԲՈՒԽԱՐԵՍՏ)

քից գոհ էի, քանի՝որ դարերին տոկալով Հաճկատարը նրա հետ տոկացել է նաև հայությունը, և այժմ, երբ բաժանվում էի նրանից, գոհ էի դարձյալ, ու այլևս անցնող սերունդների նման ճմլված չէր իմ սիրտը, քանի որ այժմ արդեն արժանացել էինք տեսնելու վերելքը մեր նոր Հայաստանի, որը սպասում է մեզ բոլորիս:

Անցնող տարիներին է՛լ ավելի նոսրացավ ռումինահայ գաղութի թիվը, 1946 թվականից հետո 1948 թ. ևս հայրենիք էր մեկնել ռումինահայ հայրենադարձների նոր քարավանը, որոշ թվով հայեր անցել էին Արգենտինա ու Եվրոպա: Սակայն, հակառակ այդ բոլորին, Աստվածածնի տոներին ամեն տարի կանոնավորաբար ուխտագնացությունները շարունակվեցին դեպի Հաճկատար: Վանքի ուխտավորների տպավորությունների մատյանում 1948, 1949 և 1950 թվականներին կան արձանագրված այս անգամ արդեն իբրև ռումինահայ թեմի առաջնորդ հոգեշնորհ տ. Վազգեն ծայրագույն վարդապետի հետևյալ նշումները.

«15 օգոստոս 1948-ի կիրակի ս. Աստվածածին

Աստուծո օգնությամբ այս տարի ալ կազմակերպեցինք ավանդական ուխտագնացությունը ի սուրբ Հաճկատար, մասնակցությամբ բազմաթիվ հայ հավատացյալներու:

Երկյուղածությամբ և հույսով լեցուն կաղոթենք այս հրաշագործ սուրբ խորանին առջև, որպեսզի բոլորին համար բարեխնամ ս. Աստվածամայրը, լսե մեր բոլորիս աղերսն ու աղաչանքը և կատարե մեր ուխտերը:

Վազգեն ծայրագույն վարդապետ»:

«14 օգոստոս 1949

Այսօր մեր հուսացյալ հոգիները վերըստին աղոթեցին ս. Հաճկատարա խորանին առջև՝ Շնորհաց Գահեն հայցելով աշխարհի խաղաղություն և կատարումը մեր բոլոր ուխտերուն:

Առաջնորդ Ռումանիո թեմի՝

Վազգեն ծայրագույն վարդապետ»:

«18 օգոստոս 1950

Վերափոխումն սուրբ Աստվածածնի

Ուխտավորներ, երկյուղած և հուսացյալ հայ ուխտավորներ հինավուրց սուրբ Հաճկատարի ողորմության բլուրը բարձրացան, եկեր ենք հրաշագործ Աստվածամոր մատուցանելու խնդրվածքն ու աղոթքը մեր՝ ի խնդիր թողության մեր մեղքերուն, ի խնդիր փրկության մեր հոգիներուն, ի խնդիր խաղաղության ամենայն աշխարհի և հաճության ի մարդիկ:

Հայ ժողովուրդի դարերու այս լուսեղեն իղձը, որպես մաքուր և արդար աղերս, թող բախե երկնային ողորմության դռները և բարեխոսությամբ Փրկչածին Մոր՝ մեր բոլորիս «ուխտերը կատար» թող ըլլան:

«Ուղիղ եղիցին աղօթք մեր որպէս խունկ առաջի քո Տէր».

Առաջնորդ հայոց Ռումանիո

Ուխտավոր՝ Վազգեն ծայրագույն վարդապետ»:

1949 թ. դեպի Հաճկատար կատարված ուխտագնացության մասին նրան մասնակից, հանգուցյալ թանկագին մայրս՝ Ատրինե Գոլանճյանը, այդ թվականի օգոստոսի 18-ին ինձ գրած նամակում ընդարձակորեն տալիս էր ուշագրավ տեղեկություններ և արտահայտում այդ առթիվ զգացած իր հույզերն ու մտորումները. ահա մի հատված իր այդ նամակից. «Շաբաթ գիշեր ըստ սովորականի «Եկեսցեի» արարողություն տեղի ունեցավ ս. Խաչ եկեղեցվույն մեջ, կիրակի առավոտ առանց թափորի կառքերով ուղևորվեցանք դեպի ս. Հաճկատարի վանքը, ուր արդեն լեցուցած էին շրջակա գյուղերեն ռումանացի գյուղացիներու ըստվար բազմություն մը, հուզումս անկարագրելի էր սիրելի զավակս, մանավանդ երբ կմտաբերեի թե այդ միևնույն ուխտագնացությունը երկու տարի առաջ քեզ հետ ըրած էինք կողք-կողքի օտար այս ափերուն վրա, ուր մեր նախնիքը իրենց շունչովը հայացուցեր ու սրբացուցեր են բլուրի այս կատարները, ուր թարմ է տակավին անոնց ազգասիրության ու ազգապահպանման համար ըրած գերագույն ճիգերը, որոնք կարծես խտացած գոլորշիանալով շիթ առ շիթ կկաթին այսօր մեր հոգիներեն ներս: Սարսուռ մը կպատե ամբողջ էությունս, չէ՞ որ պիտի գա օր մը ուր արդեն ձուլումի ահեղ հոսանքեն կլանված՝ ոչ իսկ հայ մը պիտի գտնվի հոս որ գա շենցնե մեր նվիրական նախնյաց կառուցած այս սրբավայրերը:... Ու այս խոհերուս մեջեն հանկարծ կսթափիմ լուսավոր պատկերովը իմ հայրենի իսկական կատարներուն ու բլուրներուն, որոնց վրա բարձրացած իմ նախնյացս հիշատակարանները կենդանի ու կանգուն՝ հավերժացուցած են մեր ճըշմարիտ ու հայրենասեր հայ վարիչներու ձեռքով ու հոն ա՛լ իմ ցեղս չի հատնիր, չձուլվիր, չկորսվիր ու որքան հպարտ կզգամ ինքզինքս մտաբերելով թե իմ հարազատս հոն է, իր նախնիներուն հիշատակովը օծված ու խնկված ս. հողին վրա, արցունքոտ աչքերով կհետևիմ քու հետքերուդ իմ անգին զավակս մաղթելով որ օր մը ես ալ արժանի ըլլամ:

Ժամը 10-ին սկսավ ս. պատարագի խորհուրդը զոր մատույց մեր արժանընտիր առաջնորդ Վազգեն ծայրագույն վարդապե-

տը, պատարագեն վերջ բոլորս հաղորդվեցանք ու հետո կատարվեցավ ըստ ավանդական սովորության խաղողի օրհնությունը: Եկեղեցին ավարտելեն հետո բոլորս հավաքվեցանք վանքին մեծ սրահը ուր ճաշեցինք բոլոր ուխտավորներս միասին մեծ խանդավառությամբ: Ճաշեն վերջ ոսկի մատյանի արձանագրությունները աչքե անցուցինք, Վազգեն ծ. վարդապետը քու գրածդ կարդաց բարձրաձայն և ամենքն ալ գովեստով հիշեցին քու անունդ. ես ալ տետրակը առի ու իմ տպավորությունները գրեցի, նախապես հայրիկդ ալ ոտանավորի ձևով գրություն մը հանձնած էր ինձի իր կողմանե գրվելու համար ան ալ հոն ընդօրինակեցի, տետրակը ավարտած էր արդեն, և որոշեցինք հառաջիկա տարի նոր մը տանինք: Այսպես օրը տարաժամած էր արդեն, երբ կառքերը եկան ու ստիպվեցանք հրաժեշտ տալ այդ խնկելի բարձունքին քաղցր և հուզիչ տպավորությամբ, մեր հոգիներեն ներս տանելով ճառագայթ մը մեր Սրբազան նախնիքներու հավատքի արևեն...

Դարձյալ գիշերեցինք միևնույն տունը ու հաջորդ առավոտ երկուշաբթի տեր Մանուալյանը պատարագեց ս. Խաչ եկեղեցվո մեջ ի հիշատակ մեր ննջեցելոց, այդ օրը այցելեցինք Զամգայի ս. եկեղեցին և վանքը, գերեզմանատան Բռունգուլի մատուռին ներքին մասը, ս. Սիմեոն եկեղեցին և այլն և երեկոյան 11-ի աքչելերատով կրկին վերադարձանք Պուքրեշ»:

Հետագա տարիներին ևս ռումինահայությունը հատկապես Բուխարեստից, ինչպես մասամբ նաև այլ քաղաքներից Աստվածածնի տոնին, գլխավորությամբ թեմի առաջնորդ գեր. տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանի, ուխտագնացություններ են կազմակերպել դեպի Հաճկատարի վանքը: Ահա թե ինչ տպավորություններ ենք գտնում Հաճկատարի ուխտավորների տպավորությունների մատյանում գրված 1952 և 1955 թվականներին գեր. տ. Վազգեն եպիսկոպոսի կողմից.

«17 օգոստոս 1952

Նախահարց մերոց հաստատած հոգևոր և ազգային ավանդության մը իբրև ջահակիրներ, հավատացյալներու փոքրաթիվ խումբով մը եկած ենք այս տարի ուխտի մեր խնդրվածքը ու ջերմ աղոթքը մատուցանելու միշտ բարեխոս ու հաճկատար սուրբ Աստվածամոր, վասն խաղաղության ամենայն աշխարհի, վասն անսասանության և պայծառության Հայաստանյաց Աստվածակառույց սուրբ եկեղեցվո և վասն բարօրության ու երջանիկ կենաց ազգիս հայոց ու վերածնված հայրենյաց:

Սուրբ Հաճկատար Մայր ողորմած
Լեր օգնական ուխտաւորաց
Ի լուսանալ առաւօտեան
Ողորմութեան զդուռն մեզ բաց:

Առաջնորդ հայոց Ռումանիո
Վազգեն եպիսկ. Պալճյան»:

«14 օգոստոս 1955-կիրակի

Ուղիղ եղիցին աղօթք մեր որպէս խունկ առաջի քո Տէր,

Բարեխօսութեամբ սուրբ Կոյս Աստուածածնի Հաճկատար:

Վազգեն եպիսկոպոս»:

Երջանկահիշատակ Գևորգ Զ-ի վախճանումից հետո Ռումինիայի և Բուլղարիայի զույգ թեմերի հոգևոր առաջնորդ Վազգեն եպիսկոպոսը շուտով դարձավ ազգընտիր Հայրապետ Ամենայն Հայոց և բազմեց Լուսավորչի գահին: Իր հոտից այնքան սիրված արժանավոր գահակալը, սակայն հակառակ իր բազմապիսի եկեղեցանվեր ու հայրենանվեր գործերին, երբեք չմոռացավ իրեն այնքան սիրելի եղող Սուչավայի Հաճկատարի վանքը:

Մի տասնամյակ հետո իր գահակալությունից, 1965 թ. հունիսին, Վեհափառ Հայրապետը դարձյալ Ռումինիա էր գտնվում: Եվ ահա այդ նույն թվականին ս. Հաճկատարը դարձյալ եզակի մի դեպք ևս էր արձանագրելու իր հնամենի պատմության ոսկեմատյանում: Իր վարդապետական քառասունքը Հաճկատարում անցկացնելուց 22 տարիներ հետո, ահա կրկին իր սիրելի հոտին այցելության էր գնում այս անգամ արդեն իբրև Վազգեն Ա Վեհափառ և նախ և առաջ Իր սեպուհ պարտականությունն էր համարում կրկին ուխտի գնալ դեպի այն սրբավայրը, որտեղից սկիզբ էր արել Իր հոգևոր կյանքը: Բացառիկ այցելություն էր այդ, երբ ռումինահայ գաղութի հարազատ մեկ զավակը, մեկնելով այնտեղից իբրև նորընծա վարդապետ, այժմ վերադառնում էր՝ դարձած կաթողիկոս Ամենայն Հայոց, և իր օրհնասականն ապրող հայ գաղութին բերում էր մեր վերածաղկող հայրենիքի կենդանարար թարմ շունչը: Դարերի ընթացքում շատ նշանավոր անձնավորություններ են այցի եկել ս. Հաճկատարի վանքին, սակայն նրա պատմության մեջ առաջին անգամն էր, որ ուխտի էր գալիս Ամենայն Հայոց մի Հայրապետ, այն էլ Իր ծնունդով՝ **Հաճկատարցի...**[10]:

---

[10] Մոլդովայի հայոց թեմի առաջնորդ Անտոն եպիսկ. Սերեբքոյենցը իր կատարած ձեռնադրությունների շարքում 1647 թ. օգոստոսի 15-ին, ս. Աստվածածնի տոնին, ս. Սիմեոն եկեղեցում Սուչավայի քահանա է ձեռնադրել «Մարտիրոս սար-

Պրոֆ. Հ. Ճ. Սիրունին, որ ներկա էր այս բառացիկ այցին, անհուն հուզումով նկարագրում է իր ստացած խոր տպավորությունը: Ինչպես իր անդրանիկ պատարագի ժամանակ, այդ օրն էլ դարձյալ մի ուրբաթ էր, երբ Վեհափառը Հաճկատար էր եկել ռումին բարձրաստիճան հոգևորականների հետ՝ «Տեսնելու համար խուցը, ուր Իր քառասունքն անցուց, և Լուսավորչեն բարև բերելու համար Հաճկատարի ս. Աստվածածնին, որ դարեր ի վեր հայ հավատքը կպահպանե հեռավոր այս բլուրին վրա:

Ցանցառ են հիմա հայերը, որ ուխտի կուգան իրեն: Փոխարեն, ուրբաթե ուրբաթ, Հաճկատարը կլեցվի ռումեն ուխտավորներով, որոնք գյուղերեն կուգան հրաշք աղերսելու հայոց Աստվածածնեն: Պետք է տեսնել երկյուղածությունը այդ գեղջուկներուն, երբ անոնք ծնկաչոք կբարձրանան նվիրական բլուրը և ծնկաչոք ալ երկիցս կդառնան հայոց վանքին շուրջը:

Այս անգամ ավելի ստվար են եկած մոտակա և հեռավոր գյուղերեն լսելով, որ Հայոց կաթողիկոսը Ինքը Հաճկատար պիտի գա անձամբ, և պիտի օրհնե ուխտավորները: Հոգևորական թափորը հազիվ ճամբա կգտնե սակայն մտնելու համար. իր քայլերուն առջև պառկած են դարման տենչացող աղջնակներ, կիներ»: Իր գրվածքի շարունակության մեջ պրոֆ. Հ. Ճ. Սիրունին բացառիկ ու խորհրդավոր է գտնում այդ օրվա Հաճկատարում մատուցված պատարագը և ապա տրված սեղանը, որը վերածվեց հայ և ռումին եղբայրության ամենավսեմ արտահայտության:

Այս անգամ շատ կարճ են Հաճկատարի ոսկեմատյանում գրված տողերը, սակայն միանգամայն ուժեղ ու արտազդեցիկ:

«25 հունիս 1965

Հայրապետական ողջույն և աստվածային օրհնություն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն սուրբ Հաճկատարին:

Վազգեն Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Պրոֆեսոր Հ. Ճ. Սիրունին, որ նախապես տեսնելով Սուչավայի անեցիների սպառվելը, գրել էր «Անի քաղաք նստեր կուլա...», այժմ Վեհափառի թողած մեծ տպավորության տակ ոգևորված հետևյալը արձանագրեց Հաճկատարի ոսկեմատյանում.

«Անի քաղաք կժպտի այսօր.

25 հունիս 1965. Հ. Ճ. Սիրունի»:

Ներկայումս էլ Հաճկատարի վանքը մնում է ռումինահայության սիրելի ուխտավայրը: Ամեն տարի Բուխարեստից և Ռումինիայի այլ քաղաքներից հայեր, ռումինաչիներ և այլազգիներ, գլխավորությամբ Ռումինիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպիսկ. Մարտիկյանի և մասնակցությամբ Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ ծ. վ. Պարոնյանի և քահանաների, կանոնավորաբար շարունակում են ուխտի գնալ Հաճկատարի վանքին: Մասնակցում են նաև ուխտավորներ Հայաստանից և արտասահմանյան երկրներից: Ամերիկա գաղթած ռումինահայերը ևս հաճախ տոնախմբություններ են սարքում՝ նվիրված անմոռանալի Հաճկատարին, երգում են նրան նվիրված շարականները:

Վեհափառ Հայրապետի համար միշտ սիրելի ու հոգեհարազատ է մնում Սուչավայի հայկական հինավուրց Հաճկատարի վանքը, իբրև Իր հոգևոր կոչման սրբազան սկզբնավայր, իբրև անխորտակ թումբ հայ հավատքի և հայ մշակույթի...:

կավագ Հաճկատարցի»-ին: Հետևաբար Հաճկատարցի կոչումը անցյալից է գալիս: (Տես Հ. Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 775: